Նար-Դոս

Նոր մարդը

(Հատվածներ անավարտ վեպից)

1

1914 թվի գարնան մի օր առավոտյան ժամը 10-ն էր, որ ծխախոտի գործարանատեր և բանկի դիրեկտոր Խանբեգյանը, լողարանից նոր ելած, խալաթը հագին, թարմ ու առույգ մտավ սեղանատուն: Մոտ վաթսուն տարեկան բարձրահասակ, բարեկազմ մարդ էր սպիտակ մազերով և խոշոր աչքերի վերև երկու երկարաձիգ տզրուկի պես ձգված սև ու խիտ հոնքերով:

Սեղանատանը ոչ ոք չկար: Արծաթյա ինքնաեռը, սեղանի ծայրին պպզած, ինչ-որ կասկածելի լռություն էր պահպանում, և Խանբեգյանն զգաց, որ այս անգամ ևս, ինչպես քիչ չէր պատահել կնոջ մահից հետո, կիսասառ թեյ պիտի խմի: Տղան ու աղջիկը վաղուց խմել գնացել էին գիմնազիոն, սեղանը թողնելով ըստ սովորականին ամենաանկարգ դրության մեջ: Կինն այդ կողմից չափազանց կարգապահ էր, մաքրասեր և խստապահանջ, և նրա մահից հետո էր, որ այդ անկարգությունը մտել էր նրա տուն, որովհետև չկար այլևս մի եռանդուն, խնամոտ ձեռք, որ ամեն բան կարգադրեր, մաքրեր, տեղավորեր. հին դայակը, որ ջահել հասակից այդ տանն էր մեծացել, արդեն շատ էր պառավել և չէր կարողանում ամեն բանի հասնել, իսկ աղախինը, ծույլ լինելով, ավելի ևս ծուլացել էր տանտիկնոջ մահից հետո և առանց հրամանի ոչնչի չէր ուզում ձեռք տալ: Խանբեգյանը պահում էր նրան միայն իր հավատարմության համար և վախենում էր նոր աղախին վարձել, որ գողություն չանի:

Խոզեր, կատարյալ խոզեր, քրթմնջաց Խանբեգյանը որդու և աղջկա հասցեին, մի հրացայտ հայացք ձգելով սեղանի վրա, որի երեսը մի կատարյալ բաբելոնյան խառնակություն էր ներկայացնում, բաժակ, ափսե, գդալ, դանակ, պատառաքաղ, կծած հացի կտորներ, մատիտ, տետրակ, դասագիրք, լրագիր և հայտնի չէ, թե թեյի սեղանի հետ ի՛նչ կապ ունեցող ծամկալներ ու սանրեր, երեսի փոշու տուփ ու բամբակ և օծանելիքի մի սրվակ թափված էին իրար մեջ խառնիխուռն, ցաք ու ցրիվ. սփռոցը ամբողջովին ծածկված էր հացի ու պանրի փշրանքով, մի տեղ թերխաշ ձվի կաթիլներ էին թափել, մի տեղ էլ թեյ էին շուռ տվել, որից սպիտակ սփռոցի այդ մասն ամբողջովին դեղնել էր:

Ո՛ւ, խոզե՛ր, խոզե՛ր, արտասանեց Խանբեգյանն այս անգամ բարձրաձայն, որպես թե այդ խոզության հեղինակները նստած լինեին սեղանի մոտ, և բարկությունից մինչև անգամ կրճտացրեց ատամները:

Սեղանի անկարգությունը դիտելուց հետո նա ձեռքի ափը դրեց ինքնաեռի փորի վրա և տեսավ, որ բոլորովին սառն է: Հանկարծ կատաղության այնպիսի պոռթկում զգաց կրծքի մեջ, որ քիչ մնաց բռունցքով տար և ինքնաեռը գլորեր հատակի վրա: Կատաղությամբ լի աչքերը փայլեցնելով, նա վրա ընկավ լամպի տակ հարմարեցրած էլեկտրական զանգակի կոճակին և սեղմեց ավելի ամուր ու ավելի երկար, քան պետք էր: Ու, սպասելով աղախնուն, սկսեց ջղային քայլվածքով անցուդարձ անել սենյակում, անդադար ցնցվելով զսպած կատաղությունից և ակամա հայհոյանքի բառեր թոցնելով բերնից:

Սակայն աղախինն ուշանում էր:

Խանբեգյանի կատաղությունը գագաթնակետին հասավ: Ձեռքերով ու ոտներով դես-դեն շպրտելով իր ճանապարհը կտրող աթոռները, եփած խեցգետնի պես կարմրատակած, նորից վեր ընկավ էլեկտրական զանգակի կոճակին և սկսեց սեղմել առաջվանից էլ ավելի ամուր ու երկարատև, միևնույն ժամանակ գոռալով այնպիսի բարձր, խռպոտ ու երկարատև ձայնով, որ կարծես մորթելիս լինեն.

Դունյա՛... Դունյաա՛... Դունյաա՛... Դունյաշաա՛...

Աղախինը, թխլիկ այտերով, կապույտ աչքերով, շեկ մազերով տասը-տասնհինգ տարեկան մի աղջիկ, ներս պրծավ վախից սփրթնած, երևի կարծելով, թե պարոնն օգնություն է կանչում:

Ի՞նչ պատահեց, պարոն, ի՞նչ պատահեց, կանչեց նա:

Պարոնն իր երկարումեկ հասակով և հրացայտ աչքերով ցցվեց նրա առջև:

Ա՛յ ինչ, ասաց նա պինդ սեղմած ատամների միջից և շրը՛փ, իր երկայն ոսկրոտ ձեռքով մի ապտակ իջեցրեց նրա ձախ այտին: Ա՛յ ինչ, կրկնեց առանց շտապելու, և այս անգամ ապտակն իջավ աղախնու աջ այտին, որովհետև ձախը նա իսկույն ծածկեց ձեռքով:

Աղախինն այս անգամ աջ այտն էլ ծածկեց մյուս ձեռքով, մի որպե լուռ ու ծայր աստիճան ապշած նայեց պարոնի կատաղությունից ցնցվող կարմրատակած երեսին վարից վեր, որովհետև պարոնն իր հասակով գրեթե կիսով չափ բարձր էր նրանից, հետո պոռոշ արավ երեխայի պես, աչքերը միանգամից լցվեցին արցունքով, և հանկարծ սկսեց լաց լինել ոչ այնքան ցավից, որքան անսովոր վիրավորանքից, որ նա առաջին անգամն էր կրում պարոնի կողմից այնքան կոպիտ կերպով:

Խանբեգյանը բռնեց նրա թևից, քարշ տվեց ինքնաեռի մոտ, նրա մի ձեռքը պոկեց այտից, կպցրեց ինքնաեռի սառը փորին և ասաց .

Սա թե՞յ է, որ պիտի խմեմ: Չեմ ասե՞լ, որ սառը թեյ չեմ սիրում: Չեմ ասե՞լ, որ իմ խմելու ժամանակ ինքնաեռը միշտ տաք պիտի լինի: Ասել եմ, չէ՞: Հարյուր անգամ կրկնել եմ, չէ՞: Թե խուլ ես, ասա, ականջդ պոկեմ, որ լսես:

Եվ Խանբեգյանն այս խոսքերի հետ նրա ականջն առավ իր բութ մատի ու ցուցամատի մեջ, ոլորեց ու քաշեց:

Աղախինն այս անգամ սաստիկ ցավից նախ մի ճիչ արձակեց, հետո սկսեց բարձրաձայն հեկեկալ:

Սո՛ւս, ձա՛յնդ, զզվե՛լի քած, աղաղակեց Խանբեգյանը, ոտը զարկելով հատակին: Ես անկարգություն չեմ սիրում: Մի բան որ ասում եմ, պե՛տք է կատարվի: Տիրուհիդ որ մեռավ, կարծում ես, որ դու էլ ազատվեցի՞ր քո պարտականություններից: Նայիր այստեղ, ցույց տվավ նա սեղանը, ո՞ւմ պարտականությունն է այս բոլորը հավաքել, կարգի դնել: Ասենք՝ Կատյան ու Վանյուշը խոզեր են, դո՞ւ ինչ ես մտածում: Թե՞ կարծում ես ինձ շատ է դուր գալիս այս խոզությունը: Թե ծառայում ես, օրինավոր ծառայիր, իսկ թե չես ուզում, կարող ես հենց այս րոպեին հաշիվդ առնել և կորչել, к черту. ես ձրի հաց ոչ ոքի չեմ ուտեցնում:

Բոլոր մաղձը աղախնու վրա թափելուց հետո Խանբեգյանի ցասումը մի քիչ նստեց, և նա սկսեց արագարագ անցուդարձ անել սենյակում, որի ժամանակ նրա երկար խալաթի լայն փեշերը բաց ու խուփ էին լինում և երևան հանում սպիտակ ներքնաշորն ու փափուկ ոսկեկար մուճակները:

Դունյան կանգնած էր ինքնաեռի մոտ և, գոգնոցի փեշն աչքերին սեղմած, շարունակում էր հեծկլտալ: Այն ականջը, որ իր ոսկրոտ մատներով ոլորել և ձիգ էր տվել պարոնը, ճակնդեղի գույն էր ստացել:

Սենյակի երկայնքը չափելիս Խանբեգյանը հանկարծ կանգ առավ նրա առջև և ասաց.

Հետո. քանի՞ անգամ պետք է զանգ տամ, որ դու բարեհաճես մտնել: Հը՞, ասա՛:

Զանգի ձայնը չեմ լսել, պատասխանեց աղախինը հեծկլտանքի միջից:

Չես լսե՞լ: Ո՞ր ջհաննամումն էիր, որ չես լսել:

Իջել էի դուռը բանալու:

Մարդ էր եկե՞լ: Ո՞վ էր:

Վիկտորիա Պավլովնան:

Վիկտ... դուրս թռավ Խանբեգյանի բերնից, և նրա խոշոր աչքերի մեջ կարծես հանկարծ կրակ վառեցին:

Խալաթի կուրծքն ու փեշերը մեքենայաբար իրար վրա ծալելով, նա խոնարհվեց դեպի աղախնու դեմքը և, նրա ձեռքերը կամացուկ հեռացնելով աչքերից, հարցրեց մի տարօրինակ անհանգստությամբ.

Հետո՞... ի՞նչ եղավ... ո՞ւր է... գնա՞ց...

Սպասում է ձեզ առանձնասենյակում:

Հաա՞: Լա՛վ:

Խանբեգյանը շտկվեց և, խալաթի կուրծքն ու փեշերը պինդ գրկած, արագորեն դիմեց դեպի ննջարանը, բայց հանկարծ ետ դարձավ և մոտեցավ աղախնուն, որը շարունակում էր լալ:

Սո՛ւս, հիմար, ի՞նչ ես լաց լինում, շշնջաց նա մեղմացած: Բարկացած էի այն խոզերի վրա, դրա համար խփեցի, թե չէ, ուրիշ անգամ ե՞րբ եմ խփել: Սուս արա, ամոթ է, Վիկտորիա Պավլովնան կլսի: Խո գիտես, որ ես քեզ հոր պես եմ նայում, թե չէ, ինքդ էլ տեսնում ես, պահելու պտուղ չես դու: Դե, բավական է (Խանբեգյանը ձեռքով շոյեց նրա գլուխը): Եվ լսիր ինչ եմ ասում, ջանիկս: Այս րոպեին ինքնաեռը կտանես կտաքացնես, հետո կգաս կարգի կդնես այս սեղանը, սփռոցը կփոխես, ինչ որ հարկավոր է կարագ, ձու, մեղր, մի խոսքով՝ ամեն բան կդարսես: Գուցե Վիկտորիա Պավլովնային ներս հրավիրեմ թեյի: Իմացա՞ր: Դե շուտ, ջանիկս: Իսկ ես գնամ հագնվեմ:

Ու արագ քայլերով դուրս գնաց:

2

Սկանդալ, կատարյալ սկանդալ, ասաց ինքն իրեն Խանբեգյանը դեմքի այնպիսի մի արտահայտությամբ, որ կարծես լուծողական էր ընդունել, և, խալաթը դեն շպրտելով, սկսեց արագ-արագ հագնվել: Ոչինչ նրան այնքան խայտառակ, այնքան ամոթալի չէր թվում, որքան իր այն վայրենի ձայնը, որով, կատաղության

գագաթնակետին հասած, կանչում էր աղախնուն: Այդ վայրենի ոռնոցն, անշուշտ, լսած պիտի լիներ Վիկտորիա Պավլովնան առանձնասենյակում, որը սեղանատնից մի սենյակով էր միայն բաժանված, և ի՞նչ պիտի մտածեր իր մասին, որ հայտնի էր որպես ծանրաբարո, հավասարակշռված և ըստ ամենայնի կրթված մարդ:

Այդպես միայն վերջին կինտոն կարող է բղավել, իսկ ես... Փո՛ւ, թքեց նա և մտքումը դրեց հենց այդ օրը մի լավ խրատել իր աղջկան և տղային, որոնց «խոզությունն» էր իսկապես, որ առիթ էր տվել իր անսովոր կատաղության:

Եվ ո՞ր սատանան այդ կնոջը բերեց հենց այն ժամանակ, երբ ես... Սկանդալ, կատարյալ սկանդալ, կրկնեց նա հայելու առջև շտկելով մազերն ու փողկապը:

Վիկտորիա Պավլովնան այն բանկի գլխավոր հաշվապահի կինն էր, որի դիրեկտորներից մեկն էր Խանբեգյանը: Մի տարուց ավելի էր, որ մեռել էր գլխավոր հաշվապահը, բայց դեռևս այն ժամանակ, երբ նա ողջ ու առողջ էր, Խանբեգյանը, չնայելով իր տարիքին, չէր կարողանում անտարբեր աչքով նայել նրա կնոջ վրա, որը հազիվ երեսուն տարեկան և շատ գեղեցիկ էր: Եվ երբ մի օր անսպասելի կերպով նրան լուր բերին, թե գլխավոր հաշվապահը հանկարծամահ է եղել սրտի արատից, Խանբեգյանն ինքն էլ չիմացավ, թե ինչու մի տարօրինակ ուրախություն զգաց սրտի խորքում: Այդ ժամանակ նրա կինը դեռևս կենդանի էր և, չնայելով հարատև հիվանդությանը, ըստ երևույթին, միտք չուներ մեռնելու: Ու երբ, երկար տանջվելուց հետո, նա, այնուամենայնիվ, մեռավ, Խանբեգյանը զգաց իրեն որպես վանդակից ազատված մի թռչուն, որը ո՛ւր ուզեր, կարող էր թռչել: Այժմ միայն նա հնարավորություն ստացավ լուրջ կերպով մտածելու, թե չի՞ կարող արդյոք այնպես անել, որ Վիկտորիա Պավլովնան իր կինը դառնար:

Սկզբում բավական ծանրակշիռ մի հանգամանք մթագնում էր նրա ուրախությունը և հուսաբեկ անում նրան, այդ այն էր, որ նա մտածում էր, թե ինքը թեև դեռևս ժիր ու առույգ, բայց արդեն մոտ վաթսուն տարեկան մարդ է, մի տասը տարուց հետո արդեն անպետք զառամյալ ծերունի կլինի, այնինչ Վիկտորիա Պավլովնան իրենից կիսով չափ ջահել էր. դեռևս շատ թարմ և այնքան գեղեցիկ, որ ոչ մի դժվարություն չէր կրի մի ջահել ամուսին գտնելու, մանավանդ որ

անզավակ էլ էր: Բայց շուտով տեսավ, որ այդ կասկածը հիմք չունի: Բանն այն է, որ Խանբեգյանի կնոջ մահից հետո Վիկտորիա Պավլովնան նրան ավելի մերձենալու հակամետություն էր ցույց տալիս, տեղի-անտեղի այցելում էր նրան, զանազան խորհուրդներ հարցնելու պատրվակով նկարագրում էր իր նյութական նեղ կացությունն ամուսնու մահից հետո և նույնիսկ մի-երկու անգամ նյութական օգնություն էր խնդրել նրանից:

Թեև Վիկտորիա Պավլովնայի այս վարմունքը մեծ չափով հուսադրում էր Խանբեգյանին, բայց մյուս կողմից մի ուրիշ ոչ պակաս ծանրակշիռ հանգամանք նրան վարանման մեջ էր գցում, ի՞նչ կասեին իր բարեկամ-ազգականները և, մանավանդ, ի՞նչ կասեին և ի՞նչ աչքով կնայեին իրենց ջահել խորթ մոր վրա իր զավակները, որոնցից ամենամեծը Միշան, Պետերբուրգի համալսարանի վերջին կուրսի ուսանող էր, իսկ նրանից փոքրը Վանյուշը, և աղջիկը Կատյան, գիմնազիոնի 7-րդ և 6-րդ դասարանի աշակերտ և աշակերտուհի:

Այս և այսպիսի մտածումների ու վարանքի մեջ նա շատ անգամ ասում էր ինքն իրեն հուսահատ մարդու վճռականությամբ . «Է՛հ, ի՛նչ ուզում են՝ թող ասեն, ի՛նչ աչքով ուզում են՝ թող նայեն, ես կանեմ իմը: Դժվարն առաջին քայլն է: Պետք է քաջություն ունենալ այդ քայլն անելու: Եվ ես կանեմ այդ քայլը: Թող սկզբում տարօրինակ թվա, հետո, ժամանակի ընթացքում, կհաշտվեն: Դա շատ բնական է»:

Այժմ էլ, երբ պատրաստվում էր գնալ ընդունելու Վիկտորիա Պավլովնային իր առանձնասենյակում, Խանբեգյանը նույն մտմտուքի մեջ էր: «Այժմ, կամ երբեք, այժմ, կամ երբեք», կրկնում էր նա մեքենայաբար, վերջին անգամ հայելու մեջ դիտելով իրեն և թաշկինակը կոխելով բաճկոնի գրպանը:

Երբ փայլուն կոշիկները հագին, մազերն անգլիական ձևով գագաթի մեջտեղից ուղիղ գծով բաժանած, խնամքով սափրած երեսին հագիվ նկատելի կերպով հոտավետ փոշի ցանած, անցնում էր սեղանատնից գլուխը բարձր ու մեջքը շամփուրի պես շիփ-շիտակ, Դունյան ինքնաեռն արդեն դուրս էր տարել տաքացնելու և դեռ լացակում աչքերով զբաղված էր սեղանը կարգի դնելով:

Կեցցե՛ս, Դունյա, իմ խելոք աղջիկ, ա՛յ հիմա հասկանում եմ, ասաց նա մի բոպե կանգ առնելով և դիտելով շուրջը: Միայն շուտ և, որ պատրաստ լինի, եկ ինձ իմաց տուր:

Ու շարունակեց քայլերը դեպի առանձնասենյակ: Քայլում էր թեթև, սահուն, առանց մարմնի ծանրություն զգալու:

3

Առանձնասենյակում նրա դեմ ելավ Վիկտորիա Պավլովնան ամբողջովին սևազգեստ: Դեմքից ետ էր քաշել սև գլխարկին պատած թանձր սև շղարշը, որի ծայրերը հասնում էին համարյա մինչև գետին: Մի անգամ նրա բազմաթիվ երկրպագուներից մեկը, որին ինքը մյուսներից ավելի նախապատվություն էր տալիս, նկատել էր նրան. «Վիկտորիա Պավլովնա, թեև դուք մի քիչ ի չարն եք գործ դնում ձեր ամուսնու հիշատակը, բայց այդ հագուստի մեջ ավելի ևս գեղեցիկ եք»: Եվ այդ օրվանից նա չէր ուզում բաժանվել իր սգո հագուստից:

Խանբեգյանը թույլ չտվավ, որ նա մոտենա իրեն, ինքը համարյա թե վազեց դեպի նա և, առանց խոնարհվելու առնելով նրա կարճ սև ձեռնոցի մեջ սեղմված ձեռքը, մոտեցրեց շրթունքներին:

Որ գիտենաք, Վիկտորիա Պավլովնա, թե ինչու ձեզ այսքան սպասեցնել տվի, անշուշտ կներեք ինձ, ասաց նա ժպտալով: Ես մի թեթև անախորժություն ունեցա աղախնիս հետ: Երևակայեցեք... Ինչո՞ւ չեք նստում: Խնդրեմ... Երևակայեցեք, այսօր մի քիչ ուշ վեր կացա, որովհետև գիշերը շատ ուշ տուն եկա, ժամը համարյա 2-ն էր, որ ժողովը վերջացավ, մտնում եմ սեղանատուն, որ թեյ խմեմ, տեսնեմ ինքնաեռը սառը՝ ինչպես կարկուտ: Ի՞նչ ծածկեմ մեղքս, ինքս ինձ չկարողացա զսպել և... Չէ, ավելի լավ է՝ չպատմեմ: Արածս լավ բան չէր, ավելացրեց նա ծանր և լրջորեն:

Դուք այնպես բղավում էիք, նկատեց Վիկտորիա Պավլովնան ժպտալով:

Խանբեգյանը թավ հոնքերը բարձրացրեց, դեմքին ծայր աստիճանի տարակուսանքի արտահայտություն տված:

Վիկտորիա Պավլովնա, ասաց նա, կարո՞ղ եք երևակայել, որ ես մինչև այժմ զարմացած եմ մնացել, թե որտեղի՞ց դուրս եկավ այդ ձայնը: Ես հիմա հասկանում եմ, թե ինչպես մարդիկ, շատ օրինավոր մարդիկ, երբեմն մարդ են սպանում: Ծայր աստիճան հուզման րոպեին նրանք, անշուշտ, դուրս են գալիս նորմալ դրությունից, կորցնում են հոգեկան հավասարակշռությունը և չեն հասկանում իրենց արածը: Մի րոպե, երբեմն մի վայրկյան, և ոճիրն արդեն կատարված է: Այո, մարդ արարածի մեջ, որքան էլ նա քաղաքակրթված և գիտակից լինի, Վիկտորիա Պավլովնա, դեռևս նստած է նախապատմական գազանը: Ես այդ փորձեցի ինձ վրա: Բայց մյուս կողմից, ասեմ ձեզ, թանկագին Վիկտորիա Պավլովնա, ավելացրեց Խանբեգյանը մտերմորեն, նստելով նրա դիմաց, ես մեղավոր չեմ. կնոջս մահից հետո այնպիսի դրություն է տիրում մեր տանը, որ ասել չեմ կարող: Ուզեմ-չուզեմ պիտի ջղայնանամ: Առանց այն էլ մեր գործարանում տիրող դրությունը՝ բանվորների պահանջները, գործադուլի սպառնալիքը, մյուս կողմից մեր բանկում երևան հանված վատնումը բոլորովին քայքայել են ջղերս:

Մի՞թե վատնում է եղել, հարցրեց Վիկտորիա Պավլովնան հետաքրքրված: Եվ ո՞րքանի:

Առայժմ մոտ հինգ հազար ռուբլու: Ռևիզիան դեռ շարունակվում է:

Հայտնի՞ են վատնիչները:

Կասկած կա մի քանիսի վրա:

Կարելի՞ է իմանալ՝ ո՛ւմ:

Ոչ, թանկագին Վիկտորիա Պավլովնա, ներեցեք: Այսքանը միայն կարող եմ ասել, որ եթե իմանաք, որ եթե իմանաք, թե ո՛ւմ վրա է գլխավորապես կասկածը, ապշած կմնաք: Ձեր հանգուցյալ ամուսինը... ա՛յ մարդ: Նրա օրով մի կոպեկ, մի կոպեկն ի՞նչ է, մի հատ կոպեկ անգամ չի կորել, իսկ ինչ նա չկա... Խանբեգյանը չվերջացրեց, որովհետև Վիկտորիա Պավլովնան ռեդիկուլից շտապով հանեց թաշկինակը և սեղմեց աչքերին:

Խանբեգյանը լռեց, դիտելով նրա սպիտակ, անբիծ, ողորկ արմունկները, որոնք բաց էին համարյա թե մինչև ուսերը, հետո, ձեռքով կամացուկ շոշափելով նրա ծունկը, ասաց.

Ներեցեք, թանկագին Վիկտորիա Պավլովնա, որ նորոգեցի ձեր վիշտը: Ի՞նչ արած, պիտի համբերեք: Ես ինքս էլ ձեր օրին եմ, ավելացրեց նա թեթև հառաչանքով:

Կարճ ժամանակ անհարմար լռություն տիրեց, որի ժամանակ Վիկտորիա Պավլովնան սպիտակ, նուրբ բատիստի թաշկինակը չէր հեռացնում աչքերից, իսկ Խանբեգյանը շարունակում էր դիտել նրա արմունկներն այն էրոտիկ հայացքով, որ տղամարդն ակամա դրսևորում է կնոջ մարմնի բաց տեղերը տեսնելիս: Այդ գեղեցիկ, ջահել, շքեղակազմ կինը երբեք այնպես ցանկալի չէր թվացել նրան, ինչպես այդ րոպեին, և նա շարունակում էր մտքումը «Այժմ կամ երբեք, այժմ կամ երբեք»:

Ու այն միջոցին, երբ նա մտածում էր, թե ի՛նչպես և ինչ խոսքերով պիտի անի իր առաջարկությունը, աղախինը մտավ և հայտնեց, թե թեյը պատրաստ է:

Խանբեգյանը շտապով վեր կացավ:

Վիկտորիա Պավլովնա, չէի՞ք կամենա ինձ հետ մի բաժակ թեյ անուշ անել:

Վիկտորիա Պավլովնան թաշկինակի ծայրով սրբեց աչքերը, որոնց մեջ արտասուքի հետք անգամ չէր երևում, թաշկինակը նորից պահեց ռեդիկուլը մեջ և նույնպես վեր կացավ:

Ոչ, շնորհակա՛լ եմ, ասաց նա, ես արդեն խմել եմ: Ես ձեզ մոտ եկել եմ իսկապես մի խնդիրքով:

Խնդիրքո՞վ, վրա բերեց Խանբեգյանը ժպտալով: Ես մինիստր չեմ և խնդիրներ չեմ ընդունում: Ես ձեզանից միայն հրամաններ կարող եմ ընդունել, ավելացրեց նա ծիծաղելով: Համեցեք, համեցեք գնանք, այնտեղ դուք կարող եք հայտնել ինձ ձեր հրամանը:

Եվ Խանբեգյանը, ոչ մի առարկություն չընդունող քնքուշ համառությամբ բռնելով Վիկտորիա Պավլովնայի թևից, առաջնորդեց նրան դեպի սեղանատուն:

Սեղանատանն ամեն ինչ կարգի էր բերված: Արծաթե ինքնաեռն ուրախ քլթքլթում էր սեղանի ծայրին: Կաթնամանից նոր եռացրած կաթը հանդարտ գոլորշի էր արձակում: Գարնանային արևի շողերը ոսկի թեք այուներ էին պտտեցնում բաց պատուհանների վերևից մինչև հատակը: Ու որքան մռայլ էր Խանբեգյանի հոգին աղախնի հետ ունեցած միջադեպի ժամանակ, այնքան ուրախ ու զվարթ էր այժմ այդ լուսավոր, շողշողուն սենյակում, ցանկալի կնոջ ներկայությամբ, և նա զգում էր, թե մի տասը-քսան տարով ջահելացել է ինքը: Միշտ լուրջ, միշտ զգաստ, միշտ ծանրախոհ նրա դեմքն այժմ շարունակ ժպտում էր մի տեսակ երանությամբ, որպես թե այլևս ոչ մի կասկած չուներ, որ իր բաղձանքը պիտի կատարվի հենց այժմ, հենց այդ րոպեին: «Այո՛, այժմ կամ երբե՛ք... Եվ ա՛յժմ, այժմ միայն», հաստատապես վճռեց նա:

Գիտե՞ք ինչ կա, Վիկտորիա Պավլովնա, ասաց նա մի տեսակ իր հասակին ոչ վայել չարաճճի տոնով, ձեր հրամանը լսելուց առաջ ես կկամենայի, որ դուք հանեիք ձեր այդ գլխարկն ու ձեռնոցները և մի-մի բաժակ լցնեիք:

Վիկտորիա Պավլովնան ժպտաց, հանեց գլխարկն ու ձեռնոցները և նստեց ինքնաեռի մոտ: Խանբեգյանը նստեց նրա դիմաց և սկսեց ախորժակով ուտել: Լույսը պատուհաններից ընկնում էր Վիկտորիա Պավլովնայի երեսին և Խանբեգյանի մեջքին: Խանբեգյանն այդ դիրքով ավելի հարմարություն ուներ դիտելու Վիկտորիա Պավլովնայի իրեն լավ ծանոթ դեմքը իր զարմանալի կանոնավոր գծերով, փոքր-ինչ կոր քթով և լիքը կզակով, որի տակից կարծես սպիտակ մարմարիրց ձուլված բարձրանիստ վիզը գնում նստում էր սև հագուստի անկվածապատ օձիքի մեջ:

«Եվ այսուհետև այսպես կլինի միշտ», մեղր ու կարագով հացը ծամելով, մտածում էր նա, առանց աչքերը հեռացնելու Վիկտորիա Պավլովնայի դեմքից, երևակայելով, թե նա արդեն իր կինն է, իր տան տիրուհին, բայց ոչ այդ սև հագուստով, այլ կուրծքն ու թևերը բաց զվարթագույն թեթև, գրգռիչ պենյուարով, ինչպես իր հանգուցյալ կինը նորահարս ժամանակ, որը նույնպես աչքի ընկնող գեղեցկուհի էր ջահել հասակում, իսկ պառաված և մանավանդ հիվանդ

ժամանակ արդեն մի զզվելի վհուկի էր նմանում:

Դուք կաթո՞վ եք խմում, Սերգեյ Պետրովիչ, հարցրեց Վիկտորիա Պավլովնան, պատրաստվելով բաժակը լցնելու:

Կաթով, թանկագինս: Առանց կաթի միայն երեկոներն եմ խմում:

Վիկտորիա Պավլովնան բաժակը լցրեց՝ կաթի տեղ թողնելով և, Խանբեգյանի առջև դնելով, ասաց լրջորեն, առանց նրան նայելու .

Ես գիտե՞ք ինչու համար եմ եկել ձեզ մոտ, Սերգեյ Պետրովիչ:

Ես լսում եմ ձեզ չորս ականջով, թանկագինս:

Իմ հանգուցյալ ամուսնու մահից հետո ձեզ արդեն հայտնի է իմ դրությունը: Ձեր ինձ ցույց տված օգնության համար ես շատ երախտապարտ եմ: Բայց այսպես չի կարելի շարունակել: Պարազիտ լինելը լավ չէ:

Վիկտորիա Պավլովնա, այդ ի՞նչ եք ասում, բացականչեց Խանբեգյանն աչքերը լայն բանալով և դադարելով ծամելուց .

Ես գիտեմ ինչ որ ասում եմ, ասաց Վիկտորիա Պավլովնան հաստատուն ձայնով և աչքերը վար թողած: Քանի ամուսինս կենդանի էր, ես ոչ մի կարոտություն չէի քաշում: Շատ հարուստ չէինք ապրում, իհարկե, բայց և ոչ աղքատ. հիմա... Մեր, այսպես ասած, հարուստ կամ ունևոր ընտանիքների ամենամեծ ցավը և դժբախտությունն այն է, որ այդպիսի ընտանիքներում կինը սովորել է ապրել մարդու հաշվին: Եվ զարմանալի չէ, որ մարդու մահից հետո նա մնում է անել դրության մեջ, սրա-նրա ձեռքին նայելով, ինչպես, ահա, ես... Սա անտանելի է: Ես արդեն զգում եմ, որ կամաց-կամաց կորցնում եմ իմ արժանապատվությունը, դադարում եմ ինքս ինձ հարգելուց... Այսպես չի կարելի շարունակել: Ես ջահել եմ, ես առողջ եմ, ես կարող եմ աշխատել և ինչո՞ւ չաշխատեմ...

Վիկտորիա Պավլովնան խոսում էր, ըստ երևույթին, անկեղծ հուզմունքով, որից նրա դեմքը փոքր-ինչ շառագունել էր, և կզակը դողդողում էր թեթևակի, ընդսմին բնավ չէր նայում Խանբեգյանին:

Իսկ Խանբեգյանը բոլորովին դադարել էր ուտելուց. արմունկներով սեղանին կոթնած, գլուխն առաջ էր տարել և զարմացած նայում էր նրա վար թողած աչքերին, որոնց վրա երկար սև թերթերունքները նույնպես դողդողում էին հուզմունքից:

Եվ ահա, Սերգեյ Պետրովիչ, շարունակեց Վիկտորիա Պավլովնան, ես եկել եմ խնդրելու ձեզ, որ ինձ որևէ աշխատանք տաք, որևէ պաշտոն ձեր բանկում կամ գործարանում...

Գործարանո՞ւմ, բացականչեց ակամա Խանբեգյանը և, ետ ընկնելով աթոռի մեջքին, սկսեց ծիծաղել:

Հա, ինչո՞ւ չէ, մեքենայաբար արտասանեց Վիկտորիա Պավլովնան, շփոթված նրա ծիծաղից, և բոլորովին շառագունեց:

Ի՞նչ պաշտոն կկամենայիք, թանկագինս, մի քիչ հեգնանքով և մի քիչ քնքշաբար հարցրեց Խանբեգյանը, նորից կոթնելով սեղանի վրա:

Ես չգիտեմ . . . Դո՛ւք պետք է ասեք:

Ծխախոտ կարո՞ղ եք լցնել, ծխախոտ կարո՞ղ եք մաքրել, տեսակների բաժանել, ծխախոտի փոշուն կդիմանա՞ք: Գիտե՞ք, որ մեր բանվորներից ու բանվորուհիներից համարյա մեկը չկա, որ վարակված չլինի թոքախտով: Թե ձեր խոսքը գրասենյակի մասին է, այնտեղ էլ այնպիսի կոպիտ և անտաշ մարդիկ են նստած, որ մի րոպե չեք դիմանա: Գալով բանկին, ի՞նչ պաշտոն կարող եք կատարել այնտեղ: Հաշվապահություն կամ հաշվետարություն գիտե՞ք: Երևի չգիտեք: Մեքենագրություն երևի նույնպես չգիտեք: Հասարակ ռեգիստրա՞տորշա: Ոչինչ բան է: Է, ուրիշ ի՞նչ է մնում այնտեղ, ուբո՞րշչիցա...

Եվ Խանբեգյանը սկսեց նորից բարեսիրտ կերպով ծիծաղել:

Վիկտորիա Պավլովնան նստած էր բոլորովին շփոթված, որով նրա դեմքն ավելի ևս գեղեցկացել էր:

Իհարկե, ինձ համար ավելի հարմար կլիներ, որ վարժուհի դառնայի, ասաց նա կամաց, բայց ցավն այն է, որ ես սիստեմատիկ կրթություն չեմ ստացել, գիմնազիայում սովորածս էլ համարյա թե մոռացել եմ:

Տեսնո՞ւմ եք, վրա բերեց Խանբեգյանը լեզուն ծլմփացնելով, շատ լավ բան եք մտածել, բայց... ոչինչ չի դուրս գալիս:

Նա վեր կացավ և, ձեռքերն անդրավարտիքի գրպանները կոխելով, սկսեց անցուդարձ անել սենյակի երկայնքով:

Բավական երկար ժամանակ լռություն տիրեց, լսվում էր միայն ինքնաեռի քլթքլթոցը և Խանբեգյանի քայլերի ձայնը:

Խանբեգյանը անցուդարձ էր անում, հետզհետե արագացնելով քայլերը, և մեքենայաբար կրկնում մտքում. «Այժմ, կամ երբեք, այժմ, կամ երբեք»:

Հանկարծ ինքն էլ չիմացավ, թե ինչպես, կանգ առավ սեղանի առջև, ձեռքերը դրեց սեղանի վրա և ամբողջ մեջքով առաջ թեքվեց դեպի Վիկտորիա Պավլովնան այնպես, որ շատ քիչ տարածություն էր մնում նրանց դեմքերի միջև:

Ես մի ուրիշ բան եմ ուզում առաջարկել ձեզ, Վիկտորիա Պավլովնա, ասաց նա շատ լուրջ կերպով և առանց շփոթվելու, մի բան, որ մինչև այդ րոպեն ամենքին չէր սպասում իրենից: Միայն մի պայմանով, որ ինձ կլսեք բոլորովին հանգիստ կերպով և հանգիստ էլ կպատասխանեք այո, կամ ոչ:

Ես ձեզ չեմ հասկանում, զարմացած ասաց Վիկտորիա Պավլովնան, ակամա դեմքը ետ քաշելով:

Առաջարկս ահա թե ինչ է, շարունակեց Խանբեգյանը, համաձա՞յն եք իմ կինը լինելու:

Թեև Վիկտորիա Պավլովնան նրա տոնից և վարմունքից, ըստ երևույթին, ուրիշ բան չէր սպասում, բայց և այնպես այնքան շփոթվեց, որ պարզապես չիմացավ ինչ պատասխանի և միայն ապուշ-ապուշ նայում էր նրա դեմքին:

Ես, իհարկե, ջահել չեմ, վրա բերեց Խանբեգյանը, այս անգամ արդեն շփոթվելով, իմ տարիքը գուցե...

Ու չվերջացրեց, որովհետև Վիկտորիա Պավլովնան հանկարծ վեր կացավ և, առանց նայելու նրան, առանց ձայն-ծպտուն հանելու, սկսեց գլխարկը ծածկել:

Խանբեգյանը տեղնուտեղը քար կտրեց:

Ես ձեզ վիրավորեցի՞, թոթովեց նա:

Ոչ:

Հապա...

Թույլ տվեք ինձ գնամ

Առանց պատասխանելու:

Առայժմ ոչ . . . այս րոպեին ոչ...

Հապա ե՞րբ:

Չգիտեմ:

Վիկտորիա Պավլովնան, մեջքը դեպի նա արած, արագորեն հագավ ձեռնոցները, ուղղեց գլխարկի սև շղարշը և ռեդիկուլը առնելով դիմեց դեպի դուռը:

Խանբեգյանը հետևեց նրան մինչև նախասենյակ:

Լսեցեք, Վիկտորիա Պավլովնա, ասաց նա, համարյա զոռով պահելով նրան, այս օրերս ես մեկնելու եմ Պետերբուրգ բանկի գործերով և շատ եմ խնդրում, որ եթե ոչ այսօր, գեթ վաղն ինձ պատասխանեք. կպատասխանե՞ք:

Չգիտեմ:

Ոչ, աղաչում եմ, պատասխանեցեք: Թող բացասական լինի ձեր պատասխանը, միայն թե պատասխանեցեք, անպատճառ պատասխանեցեք: Այո՞:

Լավ:

Ե՞րբ,

Վաղը:

Ի՞նչպես: Սպասե՞մ ձեզ, թե...

Կգրեմ:

Ինձ մեկ բառ էլ բավական կլինի, այո, կամ ոչ: Լսո՞ւմ եք, Վիկտորիա Պավլովնա այո, կամ ոչ, կանչեց նրա հետևից Խանբեգյանը, երբ նա արդեն իջնում էր մարմարի լայն սանդուղքներով և շուտով ծածկվեց ներքևում:

4

Հետևյալ օրը առավոտից մինչև երեկո Խանբեգյանն անհամբեր սպասում էր Վիկտորիա Պավլովնայի նամակին: Սպասողական դրության մեջ, ոչ մի բանի վրա չէր կարողանում կենտրոնանալ: Մոռացել էր բանկում երևան հանված վատնումը, որ վերջին օրերը շատ էր զբաղեցնում նրան. նույնիսկ հետին գծի վրա էր քաշվել գործարանի բանվորների պահանջը աշխատավարձի հավելման մասին, որը քիչ մտահոգություն չէր պատճառում նրան: Այն րոպեից, երբ նախորդ օրը Վիկտորիա Պավլովնան հեռացավ նրանից, նա աշխատում էր վերլուծել այդ կնոջ հոգեբանական դրությունը և տարօրինակ վարմունքն իր առաջարկությունից հետո, որպեսզի պարզեր, թե ինչ պատասխան կստանար, դրակա՞ն, թե բացասական, և որքան գլուխ էր կոտրում, ոչ մի եզրակացության չէր կարողանում հանգել: Եվ որքան ուշանում էր պատասխանը, այնքան նրա ջղային լարված դրությունը սաստկանում էր: «Թող բացասական լինի պատասխանը, միայն թե շուտով վերջանա այս անտանելի դրությունը», ասում էր նա ինքն իրեն երեկոյան դեմ իր առանձնասենյակում արագ քայլելով մի անկյունից մյուսը:

Այդ միջոցին աղախինը մտավ և հայտնեց, որ մի պառավ կին ուզում է տեսնել նրան:

Խանբեգյանը կարծես հանկարծ թևեր առավ: Այդ պառավ կինը, անշուշտ, Վիկտորիա Պավլովնայի կողմից էր և բերել էր սպասված պատասխանը: Եվ հրամայեց աղախնուն, որ իսկույն ներս հրավիրե նրան:

Անհամարձակ քայլերով ներս մտավ պառավ կինը և կանգ առավ դռան մոտ այնպիսի մի վախկոտ կեցվածքով, որ կարծես ուզում էր անտեսանելի մնալ: Նա ոչնչով չէր տարբերվում փողոցների անկյունում նստած մուրացիկ կանանցից, փոքրիկ, լղար, խորշոմած դեմքով, լացակում աչքերով, գլխին մի սև, հնությունից դեղնած շալ, հագին ծակոտկեն մի դեյրա, ոտներին կրունկների հետևի մասը ներս ծալված տղամարդու հնամաշ չուստեր, այդ բոլորի հետ միասին նրա գլուխը փոքրիկ մարմնի վրա անդադար շարժվում էր, որը նրա լացած աչքերի հետ չափազանց խղճալի տեսք էր տալիս նրան:

Խանբեգյանը կանգ էր առել և երկար նայում էր նրան ապշած: Վիկտորիա Պավլովնան չէր կարող այդպիսի մի կնոջ ձեռքով ուղարկել իր պատասխանը: Հետո, ի՞նչ էին նշանակում այդ լացակում աչքերը, այդ արցունքները, որոնք պլպլում էին նրա դեմքի խորշոմների մեջ:

Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում, հարցրեց նա վերջապես:

Շուշանի մերն եմ, աղա ջան, պատասխանեց պառավը լալագին ձայնով:

Շուշա՞ն,.. ի՞նչ Շուշան:

Շուշան Մարտիրոսովի:

Ո՞վ է Շուշան Մարտիրոսովը, ես քեզ չեմ հասկանում:

Էն, որ ձեր փաբրիկումը բանում էր:

Չեմ ճանաչում, չգիտեմ:

Հա, աղա ջան, դու չես գիտենա: Ձեր ուպրավլաուչին գիդա:

Լավ, հետո՞:

Պառավը փղձկաց և փղձուկի միջից հազիվ կարողացավ արտասանել.

Չարդ տարավ...

Մեռա՞վ:

Մեռավ, աղա ջան, մեռավ, մեռավ նաչարս...

Պառավն, ըստ երևույթին, զսպում էր իրեն, որ բարձրաձայն լաց չլինի այդ տղամարդու առաջ, որից իրեն հեռու էր զգում, ինչպես երկինքն երկրից, բայց և այնպես մայրական կսկիծը հաղթեց, և նա, շալի ծայրով ծածկելով աչքերը, սկսեց հեկեկալ:

Լավ, ես ի՞նչ անեմ, որ մեռավ, ասաց Խանբեգյանը զարմացած նայելով նրա փոքրիկ մարմնին, որ ամբողջապես ցնցվում էր հեկեկանքից դռան մոտ կուչ եկած:

Չոր տափին մնացինք, աղա ջան... իրեք որբերով... մեր տեր ու տիրականը նա էր, աղա ջան... սրանից եդը ի՞նչ պտի անենք, ի՞նչ պտի անենք...

Խանբեգյանը հոնքերը կիտեց: Չէր իմանում ի՛նչպես վերջ տա այդ իրեն համար անախորժ տեսարանին և մի բան ասած լինելու համար հարցրեց.

Շա՞տ ժամանակ էր հիվանդ:

Հա, աղա ջան, շատ վախտ էր հիվանդ, աչքերը սրբելով ասաց պառավը, համա ըսկի մի օր էլ բանից եդ չէր ընգել: Էրեգ չէ, մեկէլ ըռավոտն էլ սաղ-սալամաթ վեր կացավ, գնաց փաբրիկը, համա ըրիգունը տուն եկավ թե չէ, բերնիցը կում-կում արին գցեց, եննա, աղիս ասեմ, արինը ոնց որ կժիցը թափես... Վո՛ւյ, վո՛ւյ, քոռանա աչքերս, քոռանա աչքերս, թակեց ծնկներին պառավը, արնաքամ ըլավ նաչարս, արնաքամ, աղա ջան, ոնց որ հավի ճիտը կտրես դեն գցես...

Չէ՞ր բժշկվում:

Ըսկի չէինք կարում ծերը ծերին գցի, դոխտուրի ու դեղի փողը ո՞րդիան էր. ինչ իմ նաչար փեսեն սալդատ չէր գնացել, էլի քչից-շատից...

Լավ, լավ, կտրեց պառավի խոսքը Խանբեգյանը, զգալով, որ նրա պատմությունը երկար է լինելու: Հիմի ասա, ինչի՞ ես եկել ինձ մոտ, հարցրեց նա, շատ լավ իմանալով, որ եկել էր օգնություն խնդրելու:

Ասեմ, աղա ջան, ընչի եմ եկել: Գիդամ, որ սա իմ տեղը չի, համա ճարը կտրածը ի՛նչ չի անի: Էրեգ էլ, ըսօր էլ գնացի ձեր ուպրավլաուչի մոտ, որ մի քիչ փող տա, նաչարիս տանեմ հողին պահ տամ, ասեց, թե իրա ժալովնեն ստացել պրծել ա, հալա մի երեք մանեթ էլ էս գլխից ա տարել, ու դարդակ ճամփա դրեց: Ինչքան խնդրվեցի, ինչքան աղաչեցի, պաղատեցի, ասի՝ բա ընչկլի ե՞փ մեռելս տափին պտի մնա ըսկի մի սև գրոշ էլ ա չհանեց, չտվեց: Հըմի, աղա ջան, ճարս կտրած, քե մոտ եմ եկել, ումիկս դու ես: Էն իմ խեղճ նաչարը վա՛յ, քոռանա քոռ մերըտ, Նատո ջան, որ ասես չէր հվանում ձեր էդ ուպրավլաուչուն, ասում էր փիս մարդ ա, համա քեզ, աղա ջան, շատ էր գովում, ասում էր, որ...

Լավ, լավ, հոնքերը տհաճությամբ կիտելով, շտապեց նորից ընդհատել պառավին Խանբեգյանը և, երեքռուբլիանոց մի ծալծլած թղթադրամ դնելով նրա բուռը, ասաց. գնա, եթե պակաս կլինի, դիմիր ֆաբրիկի բանվորներին ու բանվորուհիներին, երևի նրանք էլ միմի բան կտան իրենց ընկերուհու թաղման համար:

Պառավը բուռը բաց արավ, նայեց թղթադրամին, հետո Խանբեգյանին այնպիսի մի հայացքով, որ Խանբեգյանը քաջություն չունեցավ ընդունելու և երեսն ակամա շուռ տվավ: Այնուհետև պառավը մի թառանչ քաշեց, դարձավ ու սուս ու փուս դուրս գնաց:

«Շնորհակալություն չհայտնեց... և իրավունք ուներ», ասաց Խանբեգյանն ինքն իրեն պառավի հանդիմանական հայացքի ազդեցության տակ, հետո, մտածելով, որ նա նախասենյակում կարող էր որևէ բան գողանալ, շտապով դուրս գնաց պառավի հետևից:

Պառավին վրա հասավ այն ժամանակ, երբ նա հագի լայն չուստերը շլմփացնելով մեկ-մեկ չափում էր սանդուղքի մարմարե աստիճանները, ախ ու վիշով ցած իջնելով: Իր փոքրիկ մարմնով, կորացած մեջքով նա այնքան խղճալի էր թվում վերևից, որ Խանբեգյանը քիչ մնաց ետ կանչեր նրան իր տված երեք ռուբլուն մի քանի ռուբլի էլ ավելացնելու, բայց հետո մտածեց. «Չէ, վատ կսովորի», և ուզում էր ներս մտնել, երբ հանկարծ լսվեց դռան զանգակի ձայնը: Նա կանգ առավ և սպասում էր, թե ո՛վ կլինի:

Աղախինը դուրս եկավ և վազեց ներքև դուռը բանալու: Մի րոպեից հետո նա սկսեց վերև վազել մի նամակ ձեռքին:

«Վերջապես», բացականչեց մտքումը Խանբեգյանը և զգաց, որ հանկարծ մի տարօրինակ դող բռնեց իր ամբողջ մարմինը: «Այո՞, թե ոչ, այո՞, թե ոչ» գրամեքենայի պես սկսեց թրխկթրխկացնել նրա գանգում ուղեղը:

Նա շտապով պատռեց ծրարը և ձեռքերը դողալուց մի անգամից չկարողացավ նամակը հանել միջից:

Նամակի մեջ գրված էր միայն մի բառ. «Այո»: Ոչ թիվ, ոչ ստորագրություն ոչինչ չկար:

Խանբեգյանը ակամա ժպտաց, նամակի թուղթը կամացուկ խփեց աղախնի քթին, պատանու աշխույժով կրնկի վրա շուռ եկավ, որ ներս մտնի, բայց հանկարծ, լուրջ դեմք առած, դարձավ աղախնուն և ասաց.

Դունյա, շուտ, վազիր այն պառավի հետևից, ետ կանչիր և բեր ինձ մոտ:

Դունյան ներքև վազեց:

Խանբեգյանը վերադարձավ առանձնասենյակ, նստեց գրասեղանի մոտ, նամակը դրեց առջևը և աչքը չէր հեռացնում կախարդական «Այո»-ից: Նամակի թղթից հոտավետ օծանելիքի սուր բուրմունք էր խփում նրա քթին: Սիրտը սաստիկ բաբախում էր, կարծես կուրծքը ծիտ էր մտել և թրթռում էր այնտեղ:

Աղախնու ուղեկցությամբ պառավը մտավ, կուչ եկավ առաջվա տեղը, դռան մոտ, և իր լացակում աչքերը հարցական հայացքով տնկեց Խանբեգյանի երեսին:

Խանբեգյանը դուրս քաշեց գրասեղանի գզրոցը, միջից հանեց մի ծալ թղթադրամներ և, առանց իմանալու, թե որքան էր, տվավ նրան:

Էն տվածս քիչ էր, ասաց նա, առ էս էլ. հիմի, կարծում եմ, բավական կլինի:

Պառավն, ըստ երևույթին, իր ամբողջ կյանքամ այդքան փող չէր տեսել իր ձեռքին: Սկզբում չհավատաց իր աչքերին, շուտ-շուտ ձեռքի ափը բաց էր անում, նայում փողերին, նորից խփում, նորից բաց անում, հետո հանկարծ մոտեցավ Խանբեգյանին, ուզեց չոքել նրա առջև և համբուրել նրա ձեռքը, բայց Խանբեգյանը շտապով ետ ու ետ քաշվեց, ակամա տհաճություն զգալով նրա ձեռքի շոշափումից:

Գնա, գնա, մայրիկ, ասաց նա մեղմորեն և իսկույն մտածեց, որ իր տարիքին ավելի շուտ «քույրիկ» ասելը կսազեր. ինձ շնորհակալություն հարկավոր չէ:

Վո՛ւյ, ո՞նց շնորհակալ չըլեմ, աղա ջան, բացականչեց պառավը, դու որ իմ խեղճ նաչարին տափի վրա չթողիր . . . Վույ, քու արևը շատ ապրի, աղա ջան, ինչքան որ պակսեց իմ նաչարից, էնքան օր...

Дуня, выведи ее, պատվիրեց Խանբեգյանն աղախնուն, որը զարմացած դիտում էր իրեն անհասկանալի և այդ տան մեջ տարօրինակ տեսարանը:

Խանբեգյանն ուզում էր կարելույն չափ շուտ ազատվել այդ կպչուն պառավից, որպեսզի նստի և մի լավ մտածի այն խենթացնելու չափ երանավետ օրերի մասին, որ իր հետևից բերելու էր «Այո»-ն:

Դունյան բռնեց պառավի թևից և դուրս տարավ: